ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"16 դեկտեմբերի 2013թ № 178-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի բ/ ենթակետով և համաձայն Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի կողմից 2013 թվականի օգոստոսին կատարված ստուգման արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրության, **ո ր ո շ ու մ ե մ.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 7-ի N 130-Ն որոշմամբ հաստատված հրատապ ծրագրերի՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում իրականացված շինարարական վերանորոգման աշխատանքներում Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի կողմից ստուգման արդյունքներով արձանագրված թերությունները վերացնելու նպատակով անհրաժեշտ հսկողություն իրականացնելու համար ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

Վ. Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ – Աշխատանքային խմբի նախագահ

Թ. Ղազարյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար

Ա. Ուստաբաշյան – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Ն. Ավանեսյան - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Ռ. Ավետիսյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ

2. Հանձնաժողովի կազմում ընդգրկել նաև համապատասխան կապալառու կազմակերպությունների ղեկավարներին:

3. Հանձնաժողովին՝ մինչև 2013 թվականի դեկտեմբերի 20-ը ապահովել արձանագրված թերությունների վերացման, արդյունքների ամփոփման ու Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատին տեղեկացման գործընթացը:

4. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2013թ. դեկտեմբերի 16
ք. Կապան